

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՆՉԱՅԻՆ ՄԻՋԱԾԱՆՑԱՎՈՐ  
ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԵՐԻ ՂՐԱԵՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

**Ս. Ո. ԱՎԵՏՅԱՆ**

Թեև գրաբարում հ.-ե. ոնգային միջածանցավոր ներկայի հիմքերի դրսևորման ընդհանուր սկզբունքը միանգամայն պարզ է (ոնգային միջածանցը դարձել է վերջածանց), սակայն գրաբարյան նշված տիպի մի շարք բայափոխքեր հ.-ե. համապատասխան մախաձևերից բխեցնելը լուրջ դժվարություններ է հարուցում:

Բանն այն է, որ հ.-ե. ոնգային միջածանցավոր ներկայի հիմքերի դեպքում հ.-ե. ոնգային \*ne/n- միջածանցը արմատի մեջ ներդրվում էր արմատական վերջին հնչյունից առաջ: Ընդ որում, ոնգային միջածանց ստանալիս արմատը հանդես էր գալիս ձայնդարձի զրո աստիճանով: Մյուս կողմից՝ ոնգային \*ne/n- ածանցը արմատի վերջին հնչյունի հետ կազմում էր խոնարհման վերջավորություններին անմիջապես նախորդող տարր, որը հ.-ե. աթեմատիկ հիմքերի նույն օրինաչափությամբ ենթարկվում էր e/Ø հերթագայության<sup>1</sup>: Այսպես, հ.-ե. \*jēug- «միացնել» արմատից ոնգային ածանցավոր հիմքը լինում է \*ju-ne-g-, իսկ վերջինիս դեպքում տեղի ունեցող ne/n- (իմա՝ e/Ø) հերթագայությունը ակնհայտ կերպով երևում է սանսկրիտի հետևյալ հարացույցից.

եզ.	հոգ.
1) yunáĵ - mi	1) yunj - mās
2) yunák - si	2) yunk - thá
3) yunák - ti	3) yunj - ánti

Նմանապես, հ.-ե. \*leik - «լքել» արմատից ոնգային հիմքը լինում է \*li-ne-k : \*li-n-k ( հմտ. սանսկ. եզ. III դ. ri-na-k-ti «լքում է», հոգ. III դ. ri-n-ĉ-ánti «լքում են») և այլն: Հարկ է նշել, որ հ.-ե. ոնգային միջածանցավոր աթեմատիկ հիմքերը ցեղակից լեզուներում հիմնականում ենթարկվել են երկու տիպի փոփոխության. մի կողմից նրանք անցել են թեմատիկ խոնարհման, մյուս կողմից ոնգային միջածանցը վերածվել է հիմքակազմ վերջածանցի:

Այսպես, առաջին կարգի փոփոխության հիմնալի օրինակներ է ընձեռում լատիներենը. հմտ. հ.-ե. \*linek - հիմքից > լատ. linquo (սանսկ. rinakti հնատիպ ձևի դիմաց), հ.-ե. \*bhined- հիմքից > լատ. findo, (սանսկ. bhinatti ձևի դիմաց), հ.-ե. \*juneg- հիմքից > լատ. iungo (սանսկ. yunakti ձևի դիմաց): Ինչպես տեսնում ենք, լատիներենում թեմատիկ խոնարհման անցած վերոհիշյալ ձևերում ոնգային -ne- միջածանցը հանդես է գալիս -n- զրո աստիճանի ձևով: Ընդ որում, վերջինս որոշ դեպքերում վերինաստավորվել է որպես արմատական հնչյուն և հանդես է գալիս նաև պերֆեկտի ձևերում. հմտ. լատ. iungō ներկա եզ. I դ., iŋŋX պերֆեկտ եզ. I դ.:

Հ.-ե. ոնգային միջածանցավոր աթեմատիկ հիմքերի կրած երկրորդ կարգի փոփոխությունը (ոնգային միջածանցի վերածվելը վերջածանցի) մեծ չափեր է ստացել հունարենում, որտեղ մասնավորապես -vv-ն ( հ.-ե. -ne-u) դուրս է եկել իր

<sup>1</sup> St'u A. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 230-231:

սկզբնական սահմաններից և գործառնվել որպես բավական կենսունակ վերջածանց<sup>2</sup>: Փաստերը ցույց են տալիս, որ հայերենում նույնպես հ.-ե. ոնգային միջածանցավոր հիմքերը դարձել են վերջածանցավոր:

Այսպես, հ.-ե. **\*leik -/loik—/lik** - արմատի ձայնդարձի երեք աստիճաններից հայերենը պահել է միայն գրո աստիճանի ներկայացուցիչը՝ հ.-ե. **\*lik** -> գրաբ. լիք: Ընդ որում, սանսկրիտի և հունարենի համապատասխան ձևերը ցույց են տալիս, որ լիք-ը հայերենում հանդես է գալիս իր նախնական իմաստով՝ որպես աորիստի հիմք. հմմտ. հ.-ե. **\*(e)-lik-e-t** > հուն. ε- λιπε, սանսկ. a-rič-a-t «լքեց», գրաբ. ե- լիք: Գրաբ. աորիստ եզ. III դ. ե- լիք ձևին համապատասխանում է ներկա եզ. III դ. լքանե ձևը: Վերջինս ծագում է հ.-ե. **-\*li-ne-k-** ոնգային միջածանցավոր ներկայի հիմքից, որի դեպքում նույնպես հ.-ե. **\*leik-** արմատը հանդես էր գալիս գրո աստիճանի ձևով՝ **\*li-ne-k-**: Ըստ այդմ՝ հ.-ե. ներկայի ոնգային միջածանցավոր հիմքը հայերենում վերածվել է ոնգային վերջածանցավոր հիմքի՝ **\*linek<sup>1</sup>** -> **\*lik<sup>1</sup>ne-** > **\*լիք-անե-** > **լք- անե** (մ): Ասվածից հետևում է, որ գրաբար թե՛ աորիստի **\*լիք-ի** > **լք-ի** և թե՛ ներկայի **\*լիք-անե-մ** > **լքանեմ** ձևերի դեպքում դրսևորվել է հ.-ե. ձայնդարձի գրո աստիճանը՝ **\*lik-**:

Այդպես էլ հ.-ե. **\*veid-** արմատի գրո աստիճանի **\*vid-**ից կազմված **\*vide-** աորիստի հիմքից է ծագում գրաբ. ե-գիտ= սանսկ. a-vid-a-t, իսկ նույն արմատի **\*vi-ne-d-** ոնգային միջածանցավոր ներկայի հիմքից՝ գրաբ. **\*գիտ-անե-մ** > գտանեմ ներկան: Հետազոտողները հ.-ե. համապատասխան ոնգային միջածանցավոր ներկայի հիմքից են բխեցնում նաև գրաբարյան բուծանեմ, դիզանեմ, լիզանեմ, մուծանեմ ներկայի ձևերը. հ.-ե. **\*bhu-ne-g-** (**<bheug** արմատից) > գրաբ. բուծանեմ (հմմտ. սանսկ. bhunkte, լատ. fungor), հ.-ե. **\*dhi-ne-gh** (**<dheigh** արմատից) > գրաբ. դիզանեմ (հմմտ. լատ. fingo), հ.-ե. **\*li-ne-gh** (**<leigh** արմատից) > գրաբ. լիզանեմ (հմմտ. լատ. lingo), հ.-ե. **\*mu-ne-g** (**\*meug** արմատից) > գրաբ. մուծանեմ (հմմտ. սանսկ. munakti, լիտ. munku)<sup>3</sup>: Բայց այս դեպքում ուշադրություն չի դարձվում այն հանգամանքին, թե ինչու կառուցվածքային տեսակետից միմյանց համապատասխանող հ.-ե. **\*li-ne-k-**ի և **dhi-ne-gh-**ի հայերեն դրսևորումները արմատական ձայնավորի ձայնդարձի տարբեր աստիճաններ են ներկայացնում. **\*լիք-անե-մ** > **լքանեմ**, բայց **\*դեզ-անե-մ** > **դիզանեմ**: Կարծում ենք՝ գրաբ. բուծանեմ (**<բոյծանեմ**), դիզանեմ (**<դեզանեմ**), լիզանեմ (**<լեզանեմ**), մուծանեմ (**<մոյծանեմ**) ներկայի ձևերը հ.-ե. վերոհիշյալ ոնգային հիմքերի օրինաչափ դրսևորումները լինել չեն կարող, քանի որ հ.-ե. **\*bhu-ne-g-ը** կանոնավոր կերպով պիտի տար. գրաբ. **\*բուծ-անե-մ** > **\*բծանեմ**, հ.-ե. **\*dhi-ne-gh-ը**՝ **\*դիզ-անե-մ** > **\*դզանեմ** և այլն: Ընդհակառակն, գրաբ. **\*բոյծանեմ** > **բուծանեմ**, **\*դեզանեմ** > **դիզանեմ** ներկաները հ.-ե. արմատական լիաձայն աստիճանի ձայնավորով նախաձևեր են պահանջում: Սակայն, ինչպես նշել ենք, հ.-ե. ոնգային հիմքերի կազմության դեպքում արմատը հանդես էր գալիս ձայնդարձի գրո աստիճանով: Ըստ այդմ՝ հ.-ե. **\*bheune-g-**, **\*dheine-gh-** տիպի ոնգային միջածանցավոր հիմքեր գոյություն ունենալ չէին կարող: Ուստի գրաբ. բուծանեմ, դիզանեմ, լիզանեմ, մուծանեմ ներկայի ձևերի առաջացման վերաբերյալ կարելի է անել երկու ենթադրություն.

1) կամ վերջիններս իրոք ծագումնաբանորեն կապված են հ.-ե. **\*bhu-ne-g-**, **\*dhi-ne-gh-**, **\*li-ne-gh-**, **\*mu-ne-g-** ոնգային հիմքերի հետ, բայց հայերենում ենթարկվել են

<sup>2</sup> Տե՛ս Ս. Шантрян, Историческая морфология греческого языка, М., 1953, էջ 184-185:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 178-179: А. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 106:

բուծի (եբոյծ), դիզի (եդէզ), լիզի (ելէզ), մուծի (եմոյծ) աորիստի հիմքերի ազդեցութեամբ: Այլ կերպ ասած՝ նշված աորիստների արմատական ձայնավորը համաբանությամբ տարածվել է նաև համապատասխան ներկայի հիմքերի վրա. դիզի-դիզանն (փոխ. \*դզանն-ի), բուծի-բուծանն (փոխ. \*բծանն-ի) և այլն,

2) կամ գրաբարյան ներկայի վերոհիշյալ ածանցավոր հիմքերը հայերենում համապատասխան աորիստների հիմքերից -անն- ածանցով երկրորդական կազմություններ են ներկայացնում, իսկ հ.-ե. \*bhu-ne-g-, \*dhi-ne-gh- և այլ ոմգային հիմքերի ներկայացուցիչները հայերենում չեն պահպանվել:

Փաստերը ցույց են տալիս, որ հայերենում վերոհիշյալ տիպի ներկայի ոմգային ածանցավոր շատ հիմքեր իրականում -անն- ածանցով աորիստի հիմքից կազմվել են երկրորդաբար: Այսպես, հ.-ե. -ske- ածանցով կազմված \*prk-ske- ներկայի հիմքից է ծագում գրաբ. ե-հարց աորիստի հիմքը (հմմտ. սանսկ. իմպերֆ. եզ. III. aprcchat): Ըստ այդմ՝ գրաբ. հարց (-ի) աորիստի հիմքից -անն- ածանցով կազմվել է հարցանն- (մ) ներկայի հիմքը: Այդ նույն ձևով հ.-ե. \*leuk-ske- ներկայի հիմքից առաջացել է նախ՝ գրաբ. աորիստ լուցի, իսկ վերջինիս հիման վրա՝ լուցանն ներկայի ձևը և այլն<sup>4</sup>: Ուստի մեզ ավելի հավանական է թվում, որ գրաբ. բուծանն, դիզանն, լիզանն, մուծանն ձևերը ևս այդպիսի երկրորդական կազմություններ են ներկայացնում: Ընդ որում՝ կարծում ենք՝ հայերենում արմատական աորիստից -անն- ածանցով երկրորդաբար ներկա կազմելու համար հիմք կարող էր ծառայել այն հանգամանքը, որ, ասենք, հ.-ե. \*yined-ից ծագած գտ-անն-մ-ի գիտ-ը և \* yid-ից ծագած գիտ-ը հայերենում համընկել են: Այդ պարագայում գտ-անն-մ ներկայի և գտ-ի (ե-գիտ) աորիստի հիմքերի ծագումնաբանական փոխհարաբերությունը կարող էր վերախմաստավորվել, և գտ-անն-մ ներկան կարող էր գիտակցվել որպես գտ-ի աորիստից - անն- ածանցով երկրորդական կազմություն:

Այդպես ընդունելու դեպքում հեշտությամբ բացատրվում է նաև գրաբարյան արմատական աորիստի (իմա՝ անցյալ կատարյալի) հիմքերին համապատասխանող այնպիսի ոմգային վերջածանցավոր ներկայի հիմքերի ծագումը, որոնք հ.-ե. ոմգային միջածանցավոր նախատիպեր չեն ունեցել (հմմտ. գրաբ. վերոհիշյալ լուցանն, հարցանն և այլն):

Այսպիսով, չնայած հ.-ե. համապատասխան նախածների առկայությանը, մեր կարծիքով, գրաբարյան ոչ բոլոր ոմգային վերջածանցավոր ներկայի հիմքերն են, որ կարելի է հ.-ե. նախալեզվից ժառանգված համարել. դրանց մի մասը հայերենում երկրորդական կազմություններ են, որոնք իրենց հերթին հիմք են ծառայել համաբանական նորանոր կազմությունների համար:

**С. Р. АВЕТЯН - Проявление индоевропейских презентных основ с носовым суффиксом в древнеармянском языке.** - Статья посвящена генетическому рассмотрению ряда презентных основ с носовым суффиксом древнеармянского языка. Делается попытка показать, что эти основы, несмотря на существование соответствующих индоевропейских праформ, не могли возникнуть из них. Автору кажется более вероятным, что часто такие основы древнеармянского языка образовывались вторично на армянской почве, чему способствовали переосмысление генетического соотношения между некоторыми презентными и аористными основами индоевропейского происхождения и аналогия.

<sup>4</sup> Sb'u A. Meillet, նշվ. աշխ., էջ 106-107: